

կեղեցիք և ընդհանուր Հայոց ազգի առ-
մանը: Այս անգամ մեր երանելի նախ-
նիք, ընդ որս և ինքն Ս. Լուսաւորի-
չն, յառաջընդ անտի 'ի Թաւրեոսէ և
'ի Բարբաղի մէջ աւանդած են մեզ
մեր կեղեցիկ ճիւղաւորութիւնը և ոչ
'ի Լուսաւորէն կամ 'ի հիմնարկու-
թեան Եջմիածնի: Լուսաւորիչը նոյն
առաքելական եկեղեցւոյն Հայրապետ
է և քրիստոնէական լուսոյ տարածող
հայրաւոր: Հոսին մէջ, ինչպէս և իւր
յաջորդը Սեդէն Դերման, սուրբ Սա-
հակ և ուրիշ: Իսկ Եջմիածնի մեծա-
սան մի է, ինչպէս Հայրապետի միւս
մեծատանները, և հայրապետական ա-
թոռանիստ, ինչպէս եղած են երբեմն
Դուբին, Լեւոն, Սիւս և այլն: Եթէ ու-
տարներուն նախընտրելիք, նոյն ա-
ռաքելութեան մեր կեղեցիկ օճերձու-
ծական, հերետախոսական անգամ կո-
չած են, թող թէ « Գրիգորեան » և
« Եջմիածնական »: Բայց մենք, որպէս
հայրապետ որդիք, պէտք չէ մեղանշնե-
ր մեր առաքելական եկեղեցւոյն դէմ, ու-
տարաց ճարտարմունքներ մեր հայրաւոր
կոչուածներուն արձագանք տալով: Մենք
պարտաւոր ենք անփոփոխ պահպանել
այն կոչումը, որ աւանդած են մեր
նախնիք և զոր մեր եկեղեցւոյն Լուսա-
ւոր ձեռքը կը կրկնէ: Անորանիկին
մէջ, այն է Ս. Բնիկ համբարան: Լու-
սաւորական, Սուրբ: Իսկ եթէ հը-
ռովմեական եկեղեցւոյն կոչումը « Բնի-
կական » (քաղաք) բառով, իսկ
յուշականը « Կաթողիկոս » (օրհնաւոր)
այս յառաջ եկած է ոչ եթէ որ և
իցէ յառաւելութեան կամ սեպհա-
կանութեան, այլ յաճախ գործադրու-
թեան: Սուր նախնեաց յաճախ և շա-
րունակ կիրառած յաւանքները մեր
եկեղեցւոյն նկատմամբ եղած է « Լուս-
աւորական » բառը, որ պարտաւոր է մենք
կիր աւանդել, և ոչ թէ նորանորոշա-
ւորութեան տեղի տալ, Եւս կիրառութեան
մենք աւանդել յարգած կրթութիւնը: Մեր
եկեղեցւոյ նախնականութիւնը և թէ
զոյն ինքն Գրիգոր Լուսաւորիչն,
(որ յաջորդ է առաքելոցն Թաւրեոսի և
Բարբաղի մէջ), որոյ սերմանած ա-
ւանդական սերմանքը ուղղելով չար-
չարանք և քրտաւոր « աճեցոյց » քան
թէ մեր եկեղեցւոյն « Լուսաւորական »
կամ « Գրիգորեան » կոչելով, զոր եր-
բէք չը կոչելին ոչ ինքն բազմաբան
Հայրապետը և ոչ իւր մեծափառակ
յաջորդները:

ՄԵԾՄԻՍԵՅԻ ՀԱՍՏԻՍԻՆ ՀՄՄԱՌՈՏ՝
ԲԱՅՑ ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍ ՄԵ:
(Հարեւանութիւն տես Մատիւ թիւ 839)

Ենթինք արդ Ս. Պօլոյ պատրի-
արքութեան վրայ կարգաւ խօսելու,
քանզի անով է որ արդի մեր ազգային
խնդիրը պիտի լուծուի:

Ս. Պօլոյ առաքելական պատրի-
արքանը հին ատեն կրնորութիւն նոյն
պատրիարքական թեմին եկեղեցական:

ներէն մտարապօլոններէն և եպիսկո-
պոսներէն: Եւ ոչ սակաւ օրինակ ու-
նինք նաև որ բնականական կայսերը
առեն ատեն ևս իրենց նկատմէ մէկ
շահուն կամ օգտին համար ըստ հա-
ճոյս պատրիարքը յաթոռէ կը մեր-
ժէին, և առանց կղերին կամքը հար-
ցունելու՝ իրենց ուղած եպիսկոպոսը 'ի
պատրիարքութիւն կը հանէին: Եւ այս
անկանուն և կամայական գործոյն սըր-
բազան երևոյթ մը ապու համար պատ-
րիարքական իշխանութիւն գեղեցունելու
առեն զայս ձեռք իւր գործածէին:
« Ի կողմանէ Լուսաւոր ընկալալ իմ
զգաւազան արքայութեան » ամա քեզ
իշխանութիւն հովուելոյ գծողութեւն
Ք. իստասի:

Եւսպէս քիչ մը կանոնադար և
քիչ մը անկանոնադար հազար տարին
աւելի պատրիարքութեան իշխանին Ս. Պօլ-
ոյ աթոռոյն առաքելական յաջորդու-
թեան:

Եկաւ հասաւ 1452 տարին: Բրիս-
տոսի, յորում Սուլթան Մեհմեդ Բ.
պաշարեց արքունական քաղաքը, և
որ ատեն Օսմանեան խնդակ գործը ահ
և սարսափ ձգած էր շրջակայ վայրաց
քաղաքաց և ժողովուրդ վրայ:

Սուլթանը խտացոյց պաշարումը,
յարձակեցաւ ներս անհամար զօրքով,
սիրտացաւ քաղաքին, և իւր հրացեալ
սիրտը զովացաւ: Իր զանազան թոյնը
ցրուելու երգուեալ էր՝ հասաւ իր քաղ-
ձանքին: անոնց հնացեալ դահուսն անդ
իւր արքայական նոր բարձրաւ՝ երկ-
րի և ծովու իշխան ըլլալով: Յայտնաւ
հատոյց իւր գնուց պարտքը, յայտնաւ
սրտին փափաքը կատարեցաւ, բայց տա-
կաւին սուրբ ու կրակէ սարսափած ժո-
ղովուրդը փախած ու դարանամուտ ե-
ղած էր:

Եւրոպացի ու անշխուժեան վրայ
թաղաւորելու անորոշելի համ չունէր:
Թաղաւորելու համար պէտք էր սիր-
տերը ամօքել, խրտածն ու ցրուածը
հաւաքել:

Բայց կրճատէր յոյն ժողովուրդը
զօրահանին կոտորածէն աւելի իւր հա-
ւատքին համար կը տաքնայէր: Եւսա-
տախտ Սուլթանը վստահացոյց թէ
անոնց հաւատքին հետ չէր իւր գործը:
Եւս համար հրամայեց ժողովուրդեան որ
իրենց պատրիարքը մը ընտրեն: Այդ ա-
մին յոյնք և ընտրեցին Գեորգ զայիլը*,
և մատուցին Սուլթանին:

Սուլթանը հարցեալ ու անդեկաց-
եալ էր նախորդ կայսերաց օրով պատ-
րիարքի իշխանութիւն գեղեցունելու ձե-
ւոյն և արարողութեան վրայ, ուստի ինքն
ալ անոնց ըրածին պէս իւր ձեռքը նո-
րէտոր պատրիարքին իշխանութեան
դաւազանը տուաւ, հեծոյց ոսկեալ
երկաթի վրայ, և պարտական ձեռնոր-
ներով զրկեց զինքն 'ի պատրիարքաւուն:

Յետ այսորիկ թաղաւորական հը-
րովարտական անուանեց զինքը Պատրի-
արք, կարգեց զինքը իշխան քրիստոնե-
ից դասուն: Հովուել գեղեցիկական ու
աշխարհական, դատաւոր ըլլալ 'ի մէջ
քրիստոնէից, յանցանքը պատժել,
հաւատքը համարձակ խոստովանել, խոր-
հուրդներ մատարարել, եկեղեցական
պաշտամունքը խնդով մոծով ըրոյցով
և բուրբաւով անխախտ կատարել,
և այլն, ինչպէս մինչև այսօր արքունի
Պէրսիականութեան մէջ կը տեսնուի:

Եւր զգեցաւ Գեորգ Պատրիարքը
սուլթանին շնորհած աշխարհական իշ-
խանութիւնն ու դաւազանը, երաւ ինչ-
պէս հովու մը ոչխարներ ժողովելու: Եւ-
սով երկուստ սրտերը հանդարտեցան,
մահաւանականի ահարկու անունը տա-
նելի եղաւ, և ամեն յոյն երևելով ի-
րենց դարանափորներէն, արքայատուր
զաւազանին ստուերին տակը պաշտպա-

* Յ.ս այն Գեորգն է, որ 'ի պատրիար-
քութեան Գեհաւատ Բ. կոչեցաւ (Երկրոս
Սքօլէրիա Եհնաւոս):

նեցան: Ունեցաւ Գեորգ իրեն յա-
տուի սպասաւորներ, զատաւորական
պաշտօնեաներ, պատժական գործա-
կաններ բանտեր և ոստիկաններ: Եւ 'ի
փոխարէն իւր քաղաքական պաշտաման
տուրք տուաւ « հազար դահեկան », զոր
ամեն Պատրիարք իշխանութիւն գեղե-
լոյ օրը կը հարկէր արքունի Գրան, և
մինչև ցայսօր կը պահուի այս հարկա-
տուութեան սովորութիւնը:

Եւս պատմութեան յայտնի կը
տեսնուի, որ մահաւանական թաղաւորի
հրամանաւ և ստուեր հրովարտականով
Պատրիարք ըլլալ, և 'ի փոխարէն ըն-
դունած իշխանութեան տուրք տալը կը
ցուցնեն թէ յունաց պատրիարքական
իշխանութիւնը առաքելական կամ ե-
կեղեցական ձեռն երո՞ծ ու աշխարհա-
կան ձեռն մէջ մտած է: — Գարձեալ
վեճերը քննելու ու դատելու, յանցա-
ւորը խեղ ու ստահալը պատժելու և
եկեղեցական իշխանութիւն չէ, այլ քա-
ղաքական, և առաքելական պատրիար-
քութեան յոյժ հեռի, որ ժողովուրդեան
հոգեկան և քաղաքական հոգեց միայն
կը պատուէր:

Մահաւանական թաղաւորին սրա-
զան և քրիստոնէայ հաւատոյ նիւթոյ
մէջ խառնուելուն պէտք չէ որ զար-
մանայ, քանզի անտի յառաջ քրիստո-
նէութեան աղաւթ պաշտամունքին ար-
գիլուած էին մահաւանական պետութե-
նէն, և զայն պատ քննելու համար հարկ
էր հրովարտակ տալ, և նոյն հրովար-
տակով՝ տաքնապալ ու կատարածոս
ժողովուրդը խաղաղել և վստահ ընել:

Կարելի չէր արդեօք որ յունաց
ազգային ներքին գործոց հոգարարն
թիւնը փոխանակ եկեղեցականի տրուե-
լու՝ աշխարհական: յոյն մը տրուէր:
Սուլթան Մեհմեդ Բ. ինքը միայն
և ոչ այլ որ բացարձակ իշխան ըլլա-
լով 'ի քաղաքական վարչութեան և
յոյժող յունաց, անհանգստութիւն էր
որ յունաց ազգային վարչութիւնը աշ-
խարհական յոյն մը յանձնելով՝ երկիշ-
խանութիւն գնէր մէկ քաղաքի մէջ:
Պարելի չէր որ յաղթողը և յաղթեալը
մէկ բազմոյն վրայ նստէին: Կղաղին
իրաց ներքին հոգարարնութիւնը կամ
դատաւորական իշխանութիւնը եկեղե-
ցական մարդու տալը աւելի բանաւոր
ու խելքի յարմար կը տեսնուէր այն
ժամանակները, և պատճառն այս է:

Երեւելեան ամեն ազգի և թաղա-
ւորի քաղաքական վարչութիւնը ասա-
ուածական (թեօքրատիք) էր, և օրէնքն
անտուածային: Եւստածառուցեց հը-
րելի, Գուրանը մահաւանականաց, և
Եւստարանը քրիստոնէից օրինական
զիրքն էր: քաղաքական դատաւորան
ներս ալ այս երեք օրինական գրքերու
պատուէրներով կը դատուէին: անոյ
համար պէտք կըլլար որ հաւատոյ պաշ-
տօնեայն ըլլար նաև պաշտօնեայ արդա-
լութեան: Եւս սկզբամբ է ահա որ
յունաց ազգին աշխարհական հոգա-
րարնութիւնը եկեղեցականին յանձնը
ւեցաւ, մահաւանք թէ տոյն սկզբամբ
եկեղեցականի արուելը հարկ էր, իսկ
աշխարհականի արուելը անարգելի:

Մինչև հոս պատմութեան կը հե-
տեի որ Ս. Պօլոյ յոյն պատրիարքու-
թիւնը իւր նախին առաքելական ձեռն
երկնելով նոր կերպարանքի մատու կեր-
պարանք եկեղեցական ու աշխարհական
պայնքն Ս. Պօլոյ պատրիարքութիւն-
նը՝ նկատմամբ տէրութեան է իշխա-
նութիւն ազգապետական, և նկատ-
մամբ յոյն դաւանութեան է առաջին
աթոռ պատրիարքութեան, և հաճ-
կատանի յոյն ազգին վրայ ունի ընդ-
հանուր իրաւասութիւն: Եւստեհեռու
առաքելական պատրիարքութեան լոկ
անուան վրայ վեճեր անձա՞ն ու տարա-
պարտ է: քանզի ինչիւրը պարզեցաւ:

Սեծափառ Սուլթանին առաւտա-
մտութեան երկու մեծ պարզ և ու-
ստացուածք ընդունեցաւ յոյն ազգը:

այս պարզեաներէն մէկն է ազգային իշ-
խան ունենալը, և երկրորդ՝ յոյն իշխա-
նին ազգային կամքը ընտրուելը: Երկու-
քն ալ անգին շնորհ, և արքունի հը-
րովարտականով և նախնականով հա-
տատուած չորս հարկը տարիէ 'ի փեր:
Եւս այս երկու բանին վրայ կեցած են
յոյն ազգին իրաւունքը: Իւր իրաւունք-
քն ու պարտքն է արքային տուած ա-
զատաշնորհութիւնը՝ իրեն անգին ա-
ւանդ և անկշռելի ստացուածք պահել
ու պաշտպանելը, որպէս զի այս ա-
ռանձնաշնորհութեանց արժանի ըլլալը
խնայուի:

Եթէ յոյն ազգին մօրէն վայրկեան
մը անցնի թէ այս պարզեաները անփոխ-
ելի և անգին իրաւունքները փառած, ապա
շնորհ կըլլայ արքայից դէմ, յանցաւոր
իւր ազգայ սերնդոյ դէմ, և անոր
գար իւր անձին դէմ: Ենթերեկ և ան-
հընարին մեղադարտութեան տակ կի-
նայ՝ եթէ թողու այս իրաւունքները որ
յախաւակցին: Իսկ ի՞նչ բառ դրո-
նելու է, եթէ յոյն մը իւր իրաւունք-
ները յափշտակուած կամ մատուած
տեսնելով խնայ և յափշտակողին կա-
մակից ըլլայ:

Յոյնէն ետքը բնականաբար կոչալ
հայոց պատրիարքութեան վրայ խօսիլ:
Սուլթան Մեհմեդ Բ. տախտի
ըլլալով գիտէր թէ այն ատենի յունաց
և հայոց մէջ մեծ նախանձնողութեան
թիւն կար: Ինքը իրեն իմաստուն և
ժողովուրդեան անդորրութիւնը կատեցող
վեհապետ՝ չէր կրնար Հայ քրիստոնե-
եաները յունաց պատրիարքին իշխա-
նութեանը տակ դնել: Հայը յոյնին
հետ դնել այնպէս էր՝ ինչպէս բամբակ
կի մէջ հուր ծրարել:

Եւս համար արժան սեպեց իմաս-
տուն արքայն՝ քրիստոնէայ հայ ժողովուրդ-
եան և ազգային գլուխ մը դնել եկե-
ղեցական և աշխարհական իշխանութե-
ան մէջ: Եւս օրինակի յոյն ժողովուրդեան
Եւս բանին համար ահա հրաման
ըրաւ, և իւր արդէն ծանօթ Պրուսայի
Յովակիմ եպիսկոպոսը 'ի մայրաքաղաք
բերել տալով՝ եկեղեցական և աշխար-
հական իշխան կարգեց քրիստոնէայ հայ
ժողովուրդեան վրայ յամի 1461:

Հոս գիտողութեան արժանի բանն
այն է որ Յովակիմի իշխանութիւնը ըզ-
դեցունելու համար յոյն պատրիարքին
համար 'ի գործն գրուած պարտու-
թիւնները կատարեց: խնայեց զինքը,
հովուելու դաւազան տուաւ, ձեռնո-
րեց, և պարտականաց ուղեկցու-
թեամբ հանգիստ յուղարկեց: Գարձե-
ալ՝ նմանօրինակ հրովարտակով զին-
քը իշխան ըրաւ ոչ միայն եկեղեցական
պաշտամունքը համարձակ կատարելու,
այլ և եկեղեցւոյ և աշխարհի մարդի-
կը ըստ քրիստոնէական օրինալ դատե-
լու, և յանցաւորը պատուհասելու:
հրովարտակին և այլ արքունի նախնի-
ներու մէջ անուանելով զինքը Բաթ-
րիք Հայոց: Եւս առաջին իշխանաւորը
արքային կամքը միայն երաւ իշխանա-
կան աթոռը: Բայց իսկ ետքն պատ-
րիարքները թուով վաթսուներեւ տեղի
ժողովուրդեան մեծերուն և երեսփոխա-
նաց ընտրութեամբը յաթոռ կեղային
ըստ օրինակի և նմանութեան յունաց
ազգին:

Եթէ մեկուն մաքէն անցնի թէ
ինչու համար Բաթրիք անունը, որ
Կոստանդնուպոլսոյ մէջ յունաց աթո-
ռոյն սեպհական պատուանուն էր,
տրուեցաւ նաև Հայոց ազգին գլխա-
ւորին, գիտնալու է որ այն աններող
ժամանակներուն մէջ մահաւանական աղ-
ղը կը թաղաւորէր, և քրիստոնէայ
ազգերն ամեն ալ սորոկ սեպուած
էին: Եւս երկու հաւատացեալներուն
մէկը տիրող բարձրութեան մէջ էր,
միւսը իւր իւր նուաճութեան մէջ:
յաղթական ժողովուրդը իւր նորառա-
ւօս պայծառութեան մէջ էր, իսկ քը-
րիստ Եւս ժողովուրդը արեւը մթացած

